ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 243-Ա

«21» հոկտեմբերի 2022 թվականի գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՂԻՆԱԿԻ ԱՐԶՈՒՄԱՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՄԱՐԱԿԱԼՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետի, 50-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Վաղինակ Արզումանի Գրիգորյանի 2022 թվականի հոկտեմբերի 21-ի դիմումը

ո ր ո շ ու մ եմ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ջրաձոր բնակավայրում տեղակայված, Վաղինակ Արզումանի Գրիգորյանի սեփականությունը հանդիսացող, 08-096-0015-0001-0002 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի հասցեավորումը սահմանել հետևյալ կերպ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ջրաձոր բնակավայր, 4-րդ փողոց, 10 հողամաս:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«21» հոկտեմբերի 2022 թվական
գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 244-Ա

«21» հոկտեմբերի 2022 թվականի գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՂԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի դրույթներով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2022 թվականի հունվարի 7-ի թիվ 9-Ա որոշման 8-րդ կետի 6-րդ ենթակետի

որոշում եմ՝

Սույն թվականի հոկտեմբերի 31-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Շաղիկ բնակավայրում իմ ղեկավարությամբ անցկացնել շտաբային ուսումնավարժություն «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը ձնաբքի դեպքում» թեմայով

Ուսումնավարժության կազմակերպման և արդյունավետ անցկացման նպատակով.

1. Նշանակել՝

Ուսումնավարժության ղեկավարի տեղակալ – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի տեղակալ՝ Արտավազդ Ղուկասյանին

Ուսումնավարժության արդյունքների ամփոփման խմբի պետ – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Սամվել Էգնատոսյանին

2. Ուսումնավարժությունում ընդգրկել՝ տարահանման հանձնաժողովը կազմավորումների ղեկավարներին

3. ՈՒսումնավարժության ղեկավարի տեղակալին՝

1) մշակել և մինչև 2022 թվականի հոկտեմբերի 21-ը իմ հաստատմանը ներկայացնել ուսումնավարժության անցկացման փաստաթղթերի փաթեթը,

2) կազմակերպել ուսումնավարժության մասնակիցների նախապատրաստումը,

3)ուսումնավարժությանը պատրաստ լինելու մասին զեկուցել մինչև 2022 թվականի հոկտեմբերի 28-ը:

4. Ուսումնավարժության մասնակիցներին՝ պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին:

5. Սույն որոշումը ծանոթացնել ուսումնավարժության մասնակիցներին:
6. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ջ. Հարությունյան

«21» հոկտեմբերի 2022 թվական
գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 245-Ա

«21» հոկտեմբերի 2022 թվականի գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂՎՈՐԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի դրույթներով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2022 թվականի հունվարի 7-ի թիվ 9-Ա որոշման 8-րդ կետի 6-րդ ենթակետի

որոշում եմ՝

Սույն թվականի հոկտեմբերի 24-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Աղվորիկ բնակավայրում իմ ղեկավարությամբ անցկացնել շտաբային ուսումնավարժություն «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը ձնաբքի դեպքում» թեմայով

Ուսումնավարժության կազմակերպման և արդյունավետ անցկացման նպատակով.

1. Նշանակել՝

Ուսումնավարժության ղեկավարի տեղակալ – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի տեղակալ՝ Արտավազդ Ղուկասյանին:

Ուսումնավարժության արդյունքների ամփոփման խմբի պետ – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Սամվել Էգնատոսյանին:

2. Ուսումնավարժությունում ընդգրկել՝ տարահանման հանձնաժողովին, կազմավորումների ղեկավարներին:

3. ՈՒսումնավարժության ղեկավարի տեղակալին՝

1) մշակել և մինչև 2022 թվականի հոկտեմբերի 21-ը իմ հաստատմանը ներկայացնել ուսումնավարժության անցկացման փաստաթղթերի փաթեթը,

2) կազմակերպել ուսումնավարժության մասնակիցների նախապատրաստումը,

3)ուսումնավարժությանը պատրաստ լինելու մասին զեկուցել մինչև 2022 թվականի հոկտեմբերի 22-ը:

4. Ուսումնավարժության մասնակիցներին՝ պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին:

5. Սույն որոշումը ծանոթացնել ուսումնավարժության մասնակիցներին:
6. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«21» հոկտեմբերի 2022 թվական
գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 246-Ա

«24» հոկտեմբերի 2022 թվականի գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ / ԲՆԱԿԱՎԱՅՐ ԲԵՐԴԱՇԵՆ / ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԱՐՓԻ ԼԻՃ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԵՆՔԵՐ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 731-Ն որոշմամբ հաստատված «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող կառույցների նկատմամբ պետական կամ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցման կարգի» 2-րդ, 3-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 33-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Բերդաշեն բնակավայրում համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության,հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0.29298 հեկտար մակերեսով հողամասի վրա Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության «ԱՐՓԻ ԼԻՃ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից ինքնակամ կառուցված հասարակական և արտադրական նշանակության շինությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով սահմանված օրինականացման պայմաններին,Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2022YZ4BWC, հիմք ընդունելով Մուշեղ Մուրադյանի կողմից լիազորված անձ Արայիկ Առաքելյանի դիմումը՝ /մուտքագրված համայնքապետարան 18 հոկտեմբերի 2022թվականի թիվ Դ-696 դիմում/

Որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Բերդաշեն բնակավայում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի

նպատակային նշանակության,հասարակական կառուցապատման գործառնական նշանակության՝ 0.29298 հեկտար մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված՝ 626.67 քառակուսի մետր արտաքին մակերեսով հասարակական նշանակության և 232.31 քառակուսի մետր արտաքին մակերեսով արտադրական նշանակության շենքեր,շինությունները ճանաչել օրինական, այն համարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի սեփականությունը:

2. Նշել, որ օրինական ճանաչված շինությունը՝

ա) չի գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում.

բ) չեն խախտվում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը.

գ) կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, այն կատուցված է քաղաքաշինական նորմերին և կանոներին համապատասխան և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ենթարկել պետական գրանցման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«24» հոկտեմբերի 2022 թվական
գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 247-Ա

«25» հոկտեմբերի 2022 թվականի գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ՎԱՂԻՆԱԿ ԱՐԶՈՒՄԱՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ, ՌՈՒԶԱՆՆԱ ՊԱՆԴՈՒԽՏԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ, ՍԱՄՎԵԼ ՎԱՂԻՆԱԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ, ՀԱՍՄԻԿ ՎԱՂԻՆԱԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԵՎ ԳԵՎՈՐԳ ՎԱՂԻՆԱԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԿԻՑ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ և 30-րդ կետերի, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների, 3-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ջրաձոր բնակավայրում գտնվող բնակելի տունը և կից շինությունները կառուցվել է մինչև 2001 թվականը , տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ 0,0658 հեկտար հողամասը հանդիսանում է Վաղինակ Արզումանի Գրիգորյանի, Ռուզաննա Պանդուխտի Եղիազարյանի, Սամվել Վաղինակի Գրիգորյանի, Հասմիկ Վաղինակի Գրիգորյանի և Գևորգ Վաղինակի Գրիգորյանի սեփականությունը և համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում և հիմք ընդունելով քաղաքացի Վաղինակ Արզումանի Գրիգորյանի 2022 թվականի հոկտեմբերի 24-ի դիմումը

Որոշում եմ

1. Վերականգնել և ճանաչել Վաղինակ Արզումանի Գրիգորյանի /ծնված՝ 12.05.1959 թվականին, անձնագիր՝ ԲԱ1289089/, Ռուզաննա Պանդուխտի Եղիազարյանի /ծնված

01.06.1964 թվականին, անձնագիր՝ AV0370970/, Սամվել Վաղինակի Գրիգորյանի /ծնված՝ 21.06.1985 թվականին, անձնագիր՝ BA2555800/, Հասմիկ Վաղինակի Գրիգորյանի /ծնված՝ 27.09.1987թվականին, անձնագիր՝ AN0336610/ և Գևորգ Վաղինակի Գրիգորյանի /ծնված՝ 24.08.1989 թվականին, անձնագիր՝ BA1289063/ սեփականության իրավունքը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ջրաձոր բնակավայրի 4-րդ փողոց, թիվ 10 հողամաս հասցեում 0.0658 հեկտար մակերեսով հողամասի վրա գտնվող 64,37 քառակուսի մետր մակերսով բնակելի տան , 52,07 քառակուսի մետր մակերսով անասնաշենքի, 28,19 քառակուսի մետր մակերսով ավտոտնակի և 16,12 քառակուսի մետր մակերսով օժանդակ շինության նկատմամբ:

2. Հողամասի սահմանները որոշվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3. Որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«25» հոկտեմբերի 2022 թվական
գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 248-Ա

«25» հոկտեմբերի 2022 թվականի գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՍԱԹԻԿ ԳԱՐԵԳԻՆԻ ԴԻԼԱՆՅԱՆԻՆ ԱՐՄԵՆ ԱՂՎԱՆԻ ՊԱՊՈՅԱՆԻ ԳՈՒՅՔԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 45-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ՇԴ1/1350/02/21 քաղաքացիական գործով 2022թվականի հուլիսի 27-ի վճիռը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնի եզրակացությունը և Սաթիկ Գարեգինի Դիլանյանի 2022 թվականի հոկտեմբերի 21-ի դիմումը՝

Որոշում եմ՝

1. Գույքի հավատարմագրային կառավարումը ի շահ Արմեն Աղվանի Պապոյանի իրականացնելու նպատակով հավատարմագրային կառավարիչ նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ամասիա բնակավայրի բնակիչ Սաթիկ Գարեգինի Դիլանյանին /նույնականացման քարտ՝ 006286082, տրված՝ 31.10.2017 021-ի կողմից/:

2. Սաթիկ Գարեգինի Դիլանյանի հետ կնքել առանց վարձատրության գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիր 3 տարի ժամկետով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«25» հոկտեմբերի 2022 թվական
գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 249-Ա

«25» հոկտեմբերի 2022 թվականի գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱԾՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՂԱԼԱՏ ՏԻԳՐԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՄԱՐԱԿԱԼՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետի, 50-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Ղալատ Տիգրանի Վարդանյանի 2022 թվականի դիմումը

ո ր ո շ ու մ եմ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ջրաձոր բնակավայրում տեղակայված, Ղալատ Տիգրանի Վարդանյանի սեփականությունը հանդիսացող, 08-096-0005-0010 կադաստրային ծածկագրով 0,0121 հեկտար ընդհանուր մակերեսով անշարժ գույքի անշարժ գույքի հասցեավորումը սահմանել հետևյալ կերպ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ջրաձոր բնակավայր 1-ին փողոց, 11 հողամաս:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

«25» հոկտեմբերի 2022 թվական
գյուղ Ամասիա